

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի „Ախուրյանի բժշկական կենտրոն,, ՓԲԸ-ն հայտարարում է բաց մրցույթ հետևյալ թափուր աշխատատեղերը զբաղեցնելու համար.

ՇԲՕԿ ընդունարանի բուժքույր - 1 հաստիք

ՀՀ Կառավարության 2011 թ հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջներով բաց մրցույթի մասնակից կարող է լինել ցանկացած անձ, որը կբավարարի ստորև նշված պայմաններին՝

1. Միջին մասնագիտական կրթության ատկայություն.
2. Համապատասխան մասնագիտական կատարելագործման ատկայություն:
3. Էթիկայի կանոնների իմացություն
4. Համակարգչով աշխատելու պարտադիր իմացություն.:

Մրցույթին կարող են մասնակցել զրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիներ, ովքեր ունեն կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն և ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Մրցույթը կկայանա 2019թ-ի սեպտեմբերի 19-ին, ժամը 14<sup>00</sup>-ին „Ախուրյանի բժշկական կենտրոն,, ՓԲԸ-ում /հասցեն գ.Ախուրյան, Ախուրյանի խճուղի 14:

Դիմողները „Ախուրյանի բժշկական կենտրոն,, ՓԲԸ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում /լրացվում է տեղում/
2. Երկու լուսանկար 3\*4 չափի
3. Քաղվածք աշխատանքային գրքույկից / աշխատանքային ստաժ ունենալու դեպքում/
4. Ինքնակենսագրություն
5. Անձնագրի պատճեն ու բնօրինակը
6. Կրթությունը հավաստող դիպլոմի և վերապատրաստման վկայականի բնօրինակներն ու պատճենները.
7. Օտարերկրյա քաղաքացիները ՀՀ կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ

Տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար ներկայացված փաստաթղթերի պատճենները հետ չեն վերադարձվում:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն աշխատանքային օր ժամը 9<sup>00</sup>-ից մինչև 15<sup>00</sup>-ը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 02.09.2019թ:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել „Ախուրյանի բժշկական կենտրոն,, ՓԲԸ /հասցեն գ.Ախուրյան, Ախուրյանի խճուղի 14, հեռախոս 7-04-10/: